Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
ապրիլի 17-ի N 213- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցի համակարգչային դասարանի համար գույքի ձեռքբերում»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցի համակարգչային դասարանի կահավորման աշխատանքներ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղ, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1.082.500,00 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոց
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թվականի ապրիլի 5-ից մինչև մայիսի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. ապրիլի 5-ից մինչև մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է պատրաստել, գնել, տեղափոխել և տեղադրել դպրոցի համակարգչային սենյակի գույքը: Արժեքը՝ 1.082.500,00 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի արժեքը կազմում է 1.082.500,00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

	կազմակերպական ծախսերը	
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ